

Արսեն Է. Հարությունյան
պայմ. գիտ. թեկնածու

ՄԻՍԻԱՆԻ Ն. ԱԴՈՆՑԻ ԱՆՎԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԱՐՁԱՆԱԳԻՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ*

Բանալի բառեր – Միսիան, թանգարան, խաչքար, արձանագրություն, տապանաքար, ցուցանմուշ, պղնձյա սպասք, կարաս, կղմինդր:

Մուտք

ՀՀ Սյունիքի մարզի Միսիան քաղաքի պատմության թանգարանը հիմնադրվել է 1989 թվականին՝ որպես Հայաստանի պատմության թանգարանի մասնաձյուղ: 1993 թ. ստացել է ինքնուրույն թանգարանի կարգավիճակ՝ կրելով անվանի պատմաբան Նիկողայոս Ադոնցի անունը:

Թանգարանի ֆոնդերում պահվում են Միսիանի տարածաշրջանի տարբեր պատմական դարաշրջանների մշակութային երևույթներն արտացոլող զանազան առարկաներ՝ նախամարդու աշխատանքային գործիքներից մինչև 19–20–րդ դդ. կիրառական արվեստի նմուշներ, որոնց հիմամբ կազմավորվել է յոթ բաժնից բաղկացած մշտական ցուցադրություն: Ուշագրավն այն է, որ ներթանգարանային ցուցադրությունից զատ, մինչ այդ բակում (փողոցի և թանգարանի շինության միջնամասում) ստեղծվել է Քարադարան, որը ներառում է տարբեր վայրերից այստեղ հավաքած խաչքարեր, տապանաքարեր և այլ քարեղեն կոթողներ: Փողոցի կողմից, դեռևս 1983 թ. ճարտարապետ Արեգ Իսրայելյանի նախագծով կառուցված մուտք-կամարով, հիմնադրվել է Քարադարանը: Մուտքի վերին ուղղանկյունաձև քարին ընթեռնելի է «Քարադարան» անունը, իսկ ձախակողմյան ուղղահայաց պատին արևի ժամացույց է քանդակված (նկ. 1):

Թանգարանի հրատարակած «Քարադարան» խորագրով գրքույկում նշված է, որ բակում ցուցադրված կոթողները գտնվել են տարաբնույթ շինարարական աշխատանքների ընթացքում, ինչպես նաև Սպանդարյան ջրամբարի տակ մնացած գյուղերից¹: Հիմնական մասը, որը ներկայացնում է Ուխտասարից ու Ջերմաջուրից բերված ժայռապատկերներ, Անգեղակոթ

*Հոդվածն ընդունվել է տպագրության 21.10.2018:


¹ Քարադարան, տեքստերը՝ **Պետրոսյան Ծ.**, լուսանկարները և ձևավորումը՝ **Հակոբյան Վ.**, Միսիան, 2010, էջ 3, 12:

ու Որոտան (Որոտն) գյուղերից տեղափոխված խաչքարեր ու խոյատապաններ՝ ծագումով Միսիանի տարածաշրջանի Շաղատ, Արևիս, Դաստակերտ բնակավայրերից, թանգարան է բերվել 1980-ականների կեսին: Հավելենք, որ բակի շուրջ 50 կոթողներից մեկ տասնյակից ավելին արձանագիր են (ևս 5-ը՝ արաբերեն արձանագրությամբ)², որոնք, ինչպես նաև թանգարանի արձանագիր ցուցանմուշները (պղնձյա սպասք, կղմինդրի բեկորներ, կարաս) մինչ օրս մասնագիտական հատուկ ուշադրության չեն արժանացել: **Թանգարանի գույքացուցակներում և ցուցադրված առարկաների պիտակների գրություններում առկա էին որոշ անձնություններ, ըստ այդմ անհրաժեշտ համարեցինք արձանագրությունները տեղում վերծանել և հրատարակել**³:

Արձանագրությունները ներկայացնում ենք ժամանակագրական և տիպաբանական կարգով, վերծանություններն ուղեկցվում են գրչանկարներով⁴ և լուսանկարներով: Վիմագրերի վերծանություններում հատուկ պայմանական նշանների միջոցով վերականգնել ենք գրիչների բաց թողած՝ համառոտագրած, ինչպես նաև եղծված տառերը: Հարկ եղած դեպքում արձանագրությունները ծանոթագրել և նշել ենք նախորդ հրատարակությունների մատենագիտությունը:

1. Վիմագրեր

1. ՍԱՐԿՈՑԱԳ. բազալտից, գտնվել է 1985 թ. Շաքի գյուղի ճանապարհամերձ հատվածի շինարարական աշխատանքների ընթացքում (չափերը՝ արտաքուստ՝ 2,18x0,65-0,70x0,44-0,48 մ, ներքուստ՝ 1,90x0,40-0,46x0,32-0,36 մ):



Հատակին ունի 5 սմ տրամաչափի անցք, ինչը թույլ է տալիս կարծել, որ ավելի ուշ այն երկրորդական կիրառություն է ունեցել կամ էլ արվել է տեղափոխման նպատակով: Գլխամասի նեղ սիստն արտաքուստ արձանագիր է, 3 տող.

ԶՏԱՌՄ/ՊԵԱԼ
ԳՐԻԳՈՂԻ ՅԱՐՔԱՅՑ:

² Արաբերեն արձանագրությամբ խոյատապաններին անդրադարձել է արևելագետ Տիգրան Միքայելյանը՝ վերծանելով դրանցից 3-ի վիմագրերը: Ժամանակագրորեն վաղագույնը Սաֆար Դուլիի տապանաքարն է, որը կրում է հիջրի 993 թ., այսինքն՝ 1584/5 թ., այնուհետ Մուհամմադ իբն Իսաբանդարի (հիջրի 1010 թ. - 1601/2 թ.) և Իսաբանդարի (հիջրի 1109 թ. - 1697/8 թ.) տապանաքարերն են: Մնացած երկու տապանագրերը հողմահարված են և վերծանել չի հաջողվել: Ուսումնասիրողը նշում է, որ խոյատապանների մի մասը Միսիանի թանգարան է տեղափոխվել Որոտան գյուղից և շրջակա բնակավայրերից, սակայն թե որ տապանաքարը ստույգ որ գյուղից է բերվել, պարզել չի հաջողվել (մանրամասն տես **Միքայելյան Տ.**, Խոյակերպ տապանաքարեր Միսիանից, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» XXIII, եր., 2004, էջ 534-540, հմնտ. նույնի Մեմորիալ հուշարձաններ Սյունիքից, «Գիտություն և տեխնիկա», 2004, N 8, էջ 12-17):

³ Ուսումնասիրությունների ընթացքում ցուցաբերած պատրաստակամության և աջակցության համար խորին շնորհակալություն ենք հայտնում թանգարանի ղեկավարությանը՝ ի դեմս տնօրեն Լյուդմիլա Գրիգորյանի:

⁴ Գրչանկարները մերն են:

⁵ Տապանագրին առաջին անգամ համառոտ անդրադարձել է վիմագրագետ Սուրեն Սաղումյանը՝ նշելով, որ սարկոֆագը հայտնաբերվել է 1987 թ., Շաքի գյուղի մոտ, իսկ գիրը գետեղված է կափարիչին: Չնայած նրան, որ Ս. Սաղումյանը ևս հավանական է համարում, որ հիշատակված է 1166 թ. անհայտ հանգամանքներում վախճանված Սյունյաց թագավոր Գրիգոր Բ-ն, այդուհանդերձ, արձանագրության գոյությունը սարկոֆագի

Դատելով տառաձևերի հնագրական առանձնահատկություններից՝ տապանագիրն առավել հարազատ է 11-12-րդ դդ.: Սարկոֆագը, ըստ ամենայնի, պատկանել է Սյունյաց թագավորության նախավերջին արքա Գրիգոր Բ-ին, որն իր եղբայր Սմբատի հետ վախճանվել է 1166 թ.: Ստեփանոս Օրբելյանն իր Պատմության ԾԹ (59) գլխի «Վասն թագաւորացն Սիւնեաց» խորագրի ներքո հիշատակում է նշված երկրամասի գահակալների անուններն ու նրանց օրոք տեղի ունեցած կարևոր իրադարձությունները⁶: Սյունյաց արքաներից Գրիգոր Ա-ն վախճանվել է 1072 թ. և թաղվել Վահանավանքում: Նրա տապանաքարը գտնվել է վանքի սյունասարահի արևելյան հատվածի պեղումների ընթացքում՝ հետևյալ արձանագրությամբ. «ԹՎԱՎԱՆ ՇԻԱ. (1072), ԳՐԻԳՈՐ ԹԱԳԱՒՈՐ ՈՐԴԻ ԱՇՈՏԿԱ»⁷: Այսինքն, սարկոֆագի վիմագրում հիշատակվածը պետք է Գրիգոր Բ-ն լինի, առավել ևս, որ նրա գերեզմանի տեղը ստույգ հայտնի չէ: Վերջինս Սենեքերիմ թագավորի չորս որդիներից ավագն էր (մյուսների անուններն են՝ Սմբատ, Սևադա, Կյուրիկե), ում մասին Սյունյաց պատմագիրը հաղորդում է. «և յետ նորա (Սենեքերիմի - Ա. Հ.) էառ զտէրութիւն նորա որդի իւր Գրիգոր՝ նուազ և ընդաղօտ թագաւորեալ»⁸: Ինչ վերաբերում է մահվան հանգամանքներին, ապա պատմագիրը միայն տարեթիվն է նշում ու ժամանակի դեպքերը շարադրում, մասնավորապես՝ հիշատակելով սելջուկների կողմից Բաղաբերդի գրավումը 1170 թ., գրում է, որ մինչ այդ. «...ինքն (Գրիգոր Բ թագավորը - Ա. Հ.) և եղբայր իւր Սմբատ յառաջ քան զառնուլ բերդին մեռանին ի 615 թուին»⁹, այսինքն՝ 1166-ին: Ցավոք, այլ տեղեկություններ պատմագիրը չի հաղորդում: Դժվար է ասել, թե բարձրաստիճան եղբայրներն ինչ հանգամանքներում են մահացել, սակայն փաստելի է, որ տևական ասպատակությունները կարող էին վերջնականապես հյուծել հասակավոր արքային, ինչով էլ պետք է պայմանավորել տապանագրում վկայված «զտառապեալ» բառի հիշատակությունը:

Ուշագրավ է վիմագրի առկայությունը սարկոֆագի կողային նիստին, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ այն հողում չի թաղվել, այլ կափարիչով ամուր փակվելուց հետո դրվել է դամբարանային կառույցի մեջ: Նմանօրինակ ստորգետնյա կառույց հայտնի է Ջրվեժից, որը պեղվել է 1958-1962 թթ.՝ հնագետ Ն. Տոկարսկու ղեկավարությամբ¹⁰: Ցավոք, այն չի պահպանվել և

վրա անիմատ է կարծում՝ մեկնաբանելով, որ այն թաղվել է հողում և «արքայաճյուղն ծածուկ հուղարկավորողները մտորել են, թե երբևէ ի հայտ կգան թագավորի մասունքները, և հավիտենական մոռացումից փրկելու համար վավերագրել են նրա անունը» (**Սաղումյան Ս.**, Նորահայտ վիմագրեր, «Էրաբեր» հաս. գիտ., 2001, N 1, էջ 101): Վերջերս մենք հատուկ անդրադարձել ենք այս սարկոֆագին և նրա արձանագրությանը, ըստ այդմ այստեղ գերեզմանը մանրամասներից (**Հարությունյան Ա.**, Սյունյաց Գրիգոր Բ արքայի անվանակիր սարկոֆագը, «Բանբեր հայագիտության», 2018, N 1, էջ 137-149):

Արձանագիր և քանդակագարդ սարկոֆագի լավագույն օրինակ է ծագումով Սուրխաթ քաղաքից (Դրիմ) արաբներեն արձանագրությամբ քարատապանը (կափարիչով), որի նեղ նիստերից մեկին խաչաքանդակ է պատկերված, մյուսին՝ րուբլառանման կանթեղ: Այն թվագրվում է 14-րդ դարով (մանրամասն տես **Крамаровский М. Г.**, Человек средневековой улицы: Золотая Орда. Византия. Италия, СПб, 2012, с. 139-141, рис. 25-27): Ավելի վաղ, արձանագիր և քանդակագարդ սարկոֆագներ հայտնի են նաև եգիպտական ու հունահռոմեական արվեստում, որայսիք ցուցադրվում են Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» արվեստի թանգարանում:

6 Տես **Ստեփանոս Օրբելյան**, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 317-321:

7 **Գրիգորյան Գր.**, Վահանավանք. պատմահնագիտական ուսումնասիրություն, Եր., 2007, էջ 58, արձ. 34:

8 **Ստեփանոս Օրբելյան**, նշվ. աշխ., էջ 320-321:

9 Նույն տեղում, էջ 337, տես նույնի Ողբ ի Ս. Կաթողիկէն, հրատարակեց Կ. Կոստանենանց, Թիֆլիս, 1885, էջ 38: 10 Տես **Токарский Н. М.**, Джрвеж II, Вохджаберд. Результаты работ Джрвежской археологической экспедиции 1958-1962 гг., Е., 1964, с. 39.

վերջին տարիներին հողով լցվել ու ասֆալտապատվել է: Չի պահպանվել նաև Շաքիում գտնվող դամբարանը, որտեղ ենթադրաբար ամփոփվել է Գրիգոր Բ-ի արձանագիր սարկոֆագը:

2. ԽԱՉՔԱՐ. Անգեղակոթից, 1420 թ. (1,71x0,82-0,88x0,15 մ): Թույլ շեշտ-



ված քիվի կենտրոնում ունի խաչաքանդակ, հիմնախաչը ներառված է հիմքում ուղղանկյուն, վերևում սրածայր խորանում. հորիզոնական խաչաթևերի վերնամասում խաղողի զույգ ողկույզներ են, իսկ արմավագարդի ելուստներն ավարտվում են խաչեր պարզած զույգ ձեռքերի տեսքով (խաչբուռ): Խաչքարի ստորին մասը հարդարված է 8 ու 6 թերթանի վարդյակներով և հավերժության խորհրդանիշով¹¹: Անկանոն փորագրությամբ աչքի ընկնող արձանագրությունը զբաղեցնում է խաչքարի արտաքին գրեթե ողջ մակերեսը, 16 տող.

ՅԱՆՈՒՆ ԱՅ, ԵՄ՝ ՆՈՒ/ՐՓԱՇ ԵՒ ԳՈՐԳ/ԻԿ
ԴԵՌԱՅԲՈՅՍ / ՏՂԱՅՔ, ԿԱՆԿՆ/ԵՑԱՔ /
ԶԽԱՉՍ / Ի ՓՐԿՈՒԹԻԼՆ / ՀՕՐ ՄԵՐ՝ /
ԹԱԴՈ/ՄԻՆ, ՀՕՐ/ԵՂԲԱԻՐ՝ / ՏՐ՝ ՄԿՐՏՉԻՆ /
ԵՒ ՄՕՐ ՈՒ ԴՕՆ/ԴԻՇԻՆ, / ՈՎ ԿԱՐԴԱՅՔ
ՅԻՇԵՑ/ԷՔ Ի ՔՍ: ԹՎ.ԻՆ.ՊԿԹ: (1420)¹²:

Վիմագրի առաջին հրատարակիչ Հ. Պետրոսյանը **Նուրփաշ** անձնանունը կարդացել է **Նուրփայ, Դոնդիշը՝ Դորդիշ**: Համաձայն արձանագրության՝ դեռևս երիտասարդ Նուրփաշն ու Գորգիկը 1420 թ. խաչքար են կանգնեցրել իրենց ծնողների, ինչպես նաև հորեղբայր տեր Մկրտչի և Դոնդիշի հոգիների փրկության համար: Հիշատակված **Նուրփաշ** և **Դոնդիշ** անձնանուններն ինքնին հետաքրքիր են. **Նուր** առաջին բաղադրիչով անունները հատկապես 15-րդ դ. հաճախադեպ են, օրինակ՝ Նուրայ, Նուրբակի, Նուրջահան, Նուրխաթուն, Նուրմելիք, Նուրպեկ և այլն, իսկ **Նուրփաշը**, ըստ էության, **Նուրիփաշա** իգական անձնանվան կրճատ ձևն է. այն հիշատակում է նաև Հր. Աճառյանը՝ վկայված 1493 թվակիր Ավետարանի հիշատակարանում՝ իբրև ձեռագրի պատվիրատու¹³: Ինչ վերաբերում է **Դոնդիշ** իգական անձնանվանը, ապա այն քանիցս վկայված է 15-րդ դ. մատենագրության մեջ. 1458 թվակիր Սաղմոսարանի հիշատակարանում կարդում ենք, որ Զաքարե վարդապետը Խառաբաստավանքի Իգնատիոս կրոնավորին պատվիրել է


¹¹ Նմանօրինակ վարդյակներն առհասարակ հատուկ են Սյունիքի վաղ միջնադարյան ճարտարապետության դպրոցին, որի լավագույն օրինակները Տեղ գյուղի Ս. Գևորգ եկեղեցու հարավային մուտքի բարավորի զույգ քանդակներն են, որոնք կարծես քննվող խաչքարի միևնույն պատկերագրության նախօրինակները լինեն (տե՛ս **Հասրաթյան Մ. Ս.**, Տեղ գյուղի միջնադարյան հուշարձանները, «Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ», Եր., 1985, էջ 242, աղ. 1):

¹² **Պետրոսյան Հ.**, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Եր., 2008, էջ 197:

¹³ Տե՛ս **Աճառյան Հր.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. Դ., Եր., 1948, էջ 96:

գրել և նկարագարողել գրչագիրը՝ իր, եղբորորդի Մկրտիչ սարկավագի, մայր Դոնդիշի և այլոց օգտագործման և հիշատակի համար. «Ես՝ նուաստ և ներգնեալ ոգի՝ պիտականուն Զաքարէ վարդապետ, ետու գրել և ոսկեզաւծ ծաղկազարդ նկարել զՍաղմոսարանս, զՊատարագամատոյցս և զԱղաթամատոյցս ի վայելումն անձին իմոյ, և եղբարորդւոյն իմոյ Մկրտիչ սարկավագի, և մօրն Դաւնդիշի...»¹⁴:

3. ԽԱՉՔԱՐ. Որոտանից, 1420 թ. (1,18x0,62-0,66x0,13-0,18 մ, պատվանդանը՝ 0,80x0,37x0,30 մ): Թույլ շեշտված քիվը հարդարված է երեք խաչաքանդակով, հիմնախաչը ներառված է վերնամասում սրածայր խորանում, արմավազարդի ելուստները պսակված են տարածև խաչերով, ստորին մասում հավերժության խորհրդանիշն է: Անարվեստ տառածներով արձանագրությունը զբաղեցնում է խաչքարի արտաքին ողջ մակերեսը՝ 19 տող.




ՅԱՆՈՒՆ ԱՅ , «ԵՄ» / ԱԴԱԼՄՈՒԼՔՍ,
ԿԱՆԿ/ՆԵՑԻ ԽԱՉՍ Ի Փ/ՐԿՈՒԹԻԼՆՆՆ / ՀՈԳՈՅՆ /
ՈՐԴՈՅ ԻՄ ՇԱ/ՀՐԻԱՐԻՆ, / ՈՐՂԷՄ՝ ՎԱՐԴ /
ՓԹԹԵ/ԱԼ :Է: (7) Ե/ՂԲԱՐՑ / ՅԻՇԱՏ/ԱԿ
ՎԵՂՔ/ԻՆՍ, ՍԱՅ / :ԺԵ: (15) ԱՄԵ/ԱՅ
ՊՍԱ/ԱԿԵՑ/ԱԼ Ի ՔԷ, ՈՎ ՈՐ ԿԱՐԴԱՅՔ /
ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ:
ԹՎԻՆՆ :ՊԿԹ: (1420):

Նկատառելով այս և նախորդ խաչքարի ժամանակային, քանդակային ու վիմագրական ընդհանրությունները՝ հավանական ենք համարում, որ դրանք միևնույն վարպետի ձեռագործն են: Խաչքարը կանգնեցրել է Աղալմուլքն իր յոթ որդիներից փոքրի՝ Շահրիարի հոգու փրկության համար, որը կյանքից հեռացել է վաղաժամ՝ տասնհինգ տարեկան հասակում: Աղալմուլք անձնանունն այլուստ մեզ հայտնի չէ:

4. ԽԱՉՔԱՐ. Որոտանից, 1423 թ. (1,72x0,85-0,88x0,25 մ, պատվանդանը՝ 1,04x0,68x0,25 մ): Գիրը՝ քիվին և քիվատակին՝ 4 տող, եզրերի վերին և ստորին մասերում՝ 3 տող, վարդյակի տակ՝ 3 տող, պատվանդանի մակերեսին՝ վարպետի անունը՝ 1 տող.

14 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հատ. Բ., կազմեց՝ Խաչիկյան Լ., Եր., 1958, էջ 100, N 135: Դոնդիշ անձնանունը վկայված է նաև նույն դարի այլ հիշատակարաններում – տես նույն տեղում, էջ 139, N 179, 428, N 541/ա, նույնի հատ. Գ., կազմեց Խաչիկյան Լ., Եր., 1967, էջ 146, N 188:



ԽՈՒԹԼՈՒԲԷԿ

ԿԱՄԱԽՆ ԱՅ, ԵՄ՝ ՈՂԱՆԷՍ ԲԱՀԱՆԱՅ /
ՈՒ ԷԶԴԵՐԱԲԱՇԵՆ ՈՒ ՄՈՐԱՐԱՏՍ ՈՒ /
ՄԱՅՐՆ ՄԵՐ ՍԱԽԼԹԱՆ, ԿԱՆԿՆԵՑ/ԻՆՔ
ԶԻԱԶՍ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ / ՀՈԳՈ ԽՈՒ/ՄԱՐԻՆ,
/ ՀԱԻՐՆ ՄԵՐՈ ԱԻՂՈՒԼԲԷԿԻՆ / ԵՒ ՅԻՇԱՏԱԿ
ՄԵԶ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ:
ԹՎԻՆ ՊՀԲ. (1423):
ԽՈՒԹԼՈՒԲԷԿ:

Խաչքարն, ըստ էության, Խույլուբեկ քարգործի ձեռակերտն է, որի անունը նշված է պատվանդանին: Հարդարված է պարզ ու համաչափ զարդաքանդակներով, վայելչագիր արձանագրությամբ: Դատելով վիմագրից՝ Ոհանես քահանան, Էզդանբաշխը, Մուրատը (թերևս սխալմամբ փորագրվել է **Մորրատ**) և նրանց մայր Մուլթանը խաչքար են կանգնեցրել Խումարի, հայր Օղուբեկի և իրենց հիշատակի համար:

Էզդանբաշխ արական անձնանունը 15-րդ դ. մատենագրության մեջ բազմիցս է հանդիպում՝ հիմնականում **Եզդանբախ** ձևով¹⁵, ըստ այսմ ենք վերականգնել բառամիջի Դ տառը: Այն հիշատակում է նաև Հր. Աճառյանը, ըստ որի՝ անձնանունը ծագումով պարսկական է, նշանակում է «աստվածատուր, աստվածաշնորհ»¹⁶: Վիմագրական այլ վկայություններ մեզ հայտնի չեն:

5. ԽԱԶՔԱՐ. Որոտանից, 1424 թ. (1,81x0,84–0,85x0,25 մ, պատվանդանը՝ 0,98x0,62x0,40 մ): Գիրք՝ քիվատակին, 3 տող, հիմնախաչի հորիզոնական թևերի վերնամասում թվականն է՝ 1 տող.



ԿԱՄԱԽՆ ԱՅ, ԵՄ՝ ԱՍԱԴՍ, ԿԱՆԿՆԵՑ/Ի
ԶԻԱԶՍ ԵՂԲԱԽԻՐԻՍ ԻՄՈ
ՇՄԱԽՈ/Ն ԲԱՀԱՆԱՅԻ,
ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ:
ԹՎԻՆ ՊՀԳ. (1424):

15 Տե՛ս ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հատ. Բ., էջ 58, N 78, 103, N 138/բ, 141, N 181 և այլն, հատ. Գ., էջ 87, N 102, 111, N 137, 131, N 166 և այլն:

16 Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ., եր., 1944, էջ 94:

Ժամանակագրական, քանդակագործական ու վիմագրական ընդհանրությունները նախորդ խաչքարի հետ ավելի քան հիմնավորում են մեր այն տեսակետը, թե այս մեկը ևս Խուրթուբեկ քարգործի ձեռակերտն է: ԽԱՉՍ բառում փորագրիչը 2-ն բաց է թողել, ապա վերևում լրացրել: Որոտան գյուղի գերեզմանոցում է գտնվում թերևս միննույն Շնավոն քահանայի տապանաքարը, հետևյալ արձանագրությամբ. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՇՄԱԽՈՆ ՔԱՀԱՆԱՔԱՐԸ, հետևյալ արձանագրությամբ. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՇՄԱԽՈՆ ՔԱՀԱՆԱՔԱՐԸ:

6. ԽԱՉՔԱՐ. Անգեղակոթից, 1549 թ. (1,70x0,74-0,82x0,25 մ, պատվանդանը՝ 1,04x0,78x0,33 մ): Գիրը՝ քիվին, 1 տող, քիվատակի խաչի թևերի շուրջ թվականն է, իսկ հիմնախորանի վերին անկյուններում՝ վարպետի անունը՝ ելնդատառ, 2 տող.



ԵՍ՝ ՄԻՐԱՂԷՍ, ՀԷԿԱԶՍ,
ԿԱՆԿԱՆԵՑԻՆՔ, ԽԱՉ(=2)Ս:
ԹՎԻՆ, ԶՂԸ. (1549):
ԱԿՈՒՆ ԿԱՐ/ՈՂ¹⁷:


16-րդ դարի շնորհաշատ խաչքարագործ վարպետների շարքում Ակոր Նկարողին անդրադարձել է վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը՝ նշելով, որ Սիսիանի շրջանից բավական սակավաթիվ կազմողների անուններ են մեզ հասել, որոնցից ամենատաղանդավորը Ակոր Նկարողն է: Նրա անվանակիր կոթողները, որոնք խաչքարեր ու տապանաքարեր են, պահպանվել են Անգեղակոթ գյուղում, որոնցից է ներկայումս Սիսիանի թանգարանի Քարադարանում գտնվող հիշյալ խաչքարը: Ըստ Ս. Բարխուդարյանի հաղորդման՝ այն կանգնած էր Անգեղակոթի Ս. Աստվածածին եկեղեցու դիմաց՝ գերեզմանատանը, որը հետագայում պատվանդանից ընկել է, բայց չի վնասվել: Ս. Բարխուդարյանը նշում է, որ խաչքարը կանգնեցնողներն են Ամիր աղան և Հեկազը (Հայկազը), մինչդեռ վիմագիրը վերծանելիս հավատարիմ է մնում բնագրին՝ առաջինի անունը կարդալով **Միրաղէս**¹⁸: **Խաչս** բառի **խաձս** ձևով փորագրումը Ս. Բարխուդարյանը պայմանավորում է այս վայրերում չ-ձ տառերի գրչության շփոթությամբ, քանի որ նույն Ակոր Նկարողի

17 Դիվան հայ վիմագրության, պրակ II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց՝ Բարխուդարյան Ս. Գ., Եր., 1960, էջ 122, արձ. 367, տե՛ս նաև Բարխուդարյան Ս., Միջնադարյան հայ ձարտարապետներ և քարգործ վարպետներ, Եր., 1963, էջ 192, արձ. 39, Հասրաթյան Մ. Ս., Սյունիքի բնակավայրերի պատմությունից, «Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ», էջ 159:

18 Տե՛ս Բարխուդարյան Ս., նշվ. աշխ., էջ 151, 192:

վեց խաչքարերից չորսի վիմագրերում **խաձս** ձևն է¹⁹: Նշենք, որ Ակոր Նկարող-կազմողի ստորագրությամբ և նախորդներին ժամանակամերձ ևս երկու խաչքար գտնվում է Արենիի Ս. Աստվածածին եկեղեցու բակում. դրանցից մեկը կրում է Հայոց ՌԸ (1559) թվականը²⁰:


7. ՏԱՊԱՆԱԲԱՐ. ուղղանկյունաձև, նախնական տեղն անհայտ, 1281 թ. (1,80x0,50 մ): Հարդարված է հարթ եզրագարդով, որից ներս մարդու գրաֆիկական պատկեր է, երկրաչափական ու բուսական զարդեր, հավերժության բոլորակ-խորհրդանիշ: Գիրը գետեղված է մարդու գրաֆիկական պատկերի շրջագծի ներսում՝ 7 տող.



ԹՎԻՍ :2: :Լ: (1281)
ԱԾՈՂՈՐ/ՄԻ ԱՅՍՐ Ճ/ԱՄՇԱՀԻ,
 ՈՎ ԿԱՐԴԱՅ/Ք ՅԻՇԵՍԱՅ/Ք Ի **ՔՍ**:

Երկրորդ տողի ԱՅՍՐ բառը գրաբարյան ԱՅՍ դերանվան սեռական հոլովաձևն է՝ նախադաս դիրքում: ՅԻՇԵՍԱՅ-ը ՅԻՇԵԼ բայի բուն հրամայականի հոգնակի թվի երկրորդ դեմքի կրավորաձև խոնարհումն է (ձիշտ ձևը պիտի լիներ՝ ՅԻՇԵՑԱՅ-ը, ց/ս անցումն անհարկի է), որն այս դեպքում նշանակում է՝ կհիշվեք: Այսպիսով՝ արձանագրության աշխարհաբար թարգմանությունը հետևյալն է. «Աստված ողորմի այս Ճամշահին: Ովքեր կարդաք, կհիշվեք Քրիստոսի մոտ»²¹: Ճամշահը նույն Ջանշահ կամ Ջանփաշան է:

8. ՏԱՊԱՆԱԲԱՐ. ուղղանկյուն օրորոցաձև, Անգեղակոթից, 16-րդ դար (0,36x0,63x0,16 մ): Լայն նիստերից մեկը հարդարված է սյունազարդ կամարների մեջ ներառված երեք միմյանցից տարբեր խաչաքանդակներով, որոնք, թերևս, Սուրբ Երրորդությունն են խորհրդանշում: Հանդիպակաց նիստին երկրաչափական զարդատարրեր են, իսկ նեղ նիստերին՝ դարձյալ խաչաքանդակներ: Տապանաքարի երեսին հասակով մեկ մարդ է պատկերված՝ ձեռքին պնակիտ՝ վրան եռաստեղն Ա: Բուն արձանագրությունն այս քանդակին կից է, 5 տող.



ԵՍ՝ ՀԵԿԱԶՍ, / ԿԱՆԿՆԵՑԻ Տ/ԱՊԱՆՍ
 Ղ/ԱՐԱՅՊԷԿ/ԻՆՆ:

19 Տե՛ս նույն տեղում, էջ 192, ծնթ. 2:

20 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պրակ III, Վայոց ձոր. Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց՝ **Բարխուդարյան Ս. Գ.**, Եր., 1967, էջ 31, արձ. 66-67:

21 Մեկնաբանության համար շնորհակալություն ենք հայտնում լեզվաբան Խաչիկ Հարությունյանին:

Դատելով տապանագրից՝ Հեկազը (Հայկազը) տապանաքար է կանգնեցրել Ղարաբեկի (Ղարայպեկ) գերեզմանին: Ուշագրավ է առաջին տողում որոշ տառերի հակառակ ձևով փորագրումը (օրինակ՝ Հ, Է, Ջ), ինչը, թերևս, գաղտնագրման նպատակով է արվել: Կարծում ենք՝ տապանագրում հիշատակված Հեկազը վերոնշյալ խաչքարի վիմագրում վկայված անձն է, որը Միրադի հետ Ակոբ Նկարող-կազմողին խաչքար է պատվիրել: Երկու կոթողներն էլ Անգեղակոթից են, ըստ այդմ նաև թվագրում ենք 16-րդ դարով:

9. ՏԱՊԱՆԱՔԱՐ. խոյաձև, Շաղատից, 1653 թ. (0,90x0,50 մ): Նիստերից մեկին մարդ է պատկերված՝ ձեռքին պնակիտ, որի վրա մասամբ նաև թվականն է զետեղված, հիմնական տապանագիրը՝ դարձերեսին և մեջքին՝ 6 տող:




ԽԱՆԻՆ / ՈՐԴԻ ԻՍԱՅ / ԱՅՍ ՔԱՐՍ ԻՄ / ԵՄ՝ ՕՎԱՆԵՍՍ ԿԱՆԿՆԵՑՈՒՑԻ:
Ի ԹՎԻՆ ՌՃԲ. (1653) ԷՐ²²:

Առաջին հրատարակիչ Ս. Սաղումյանը նկատում է, որ տապանագրի տողերը խառնիխուռն են, և թեպետ վերից վար հաջորդականությամբ ստացվում է նշված վերծանությունը, այդուհանդերձ հնարավոր է նաև հետևյալ տարբերակը. Ի ԹՎԻՆ ՌՃԲ (1653) ԷՐ, ԵՄ՝ ՕՎԱՆԵՍՍ, ԿԱՆԿՆԵՑՈՒՑԻ ԱՅՍ ՔԱՐՍ ԻՄ ՈՐԴԻ ԻՍԱՅԻՆԻՆ²³: Այսինքն՝ ննջեցյալը Իսախանն է, որի տապանաքարը կանգնեցրել է հայրը՝ Օվանեսը: Բառախաղերով այլ վիմագրեր մեզ հայտնի չեն, ըստ այդմ ընդունելի ենք համարում առաջին տարբերակը: Հետաքրքիր է, որ տապանագրերը ննջեցյալների անուններից բացի երբեմն հայտնում են նաև քարը կանգնեցնողների, այսինքն՝ պատվիրատուների անունները, ինչպես այս դեպքում Օվանեսն է:

10. ՏԱՊԱՆԱՔԱՐ. խոյաձև, Շաղատից, 1661 թ. (1,35x0,65 մ): Հարավային նիստին ունի խոշորատառ ու անվարժ փորագրությամբ արձանագրություն՝ 3 տող:

22 Սաղումյան Ս., Նորահայտ վիմագրեր, էջ 101, արձ. ա:
23 Նույն տեղում:



ԵՄ՝ ՄԵԼԻՔԻ ՈՐԴԻ ԱՂԷՍ,
ԳԱՆԿՆԵՑԻ / ԶԴԱՐԱՆՍ ԷՂԲԱԼԻՐՆ
ԻՄ ՍԱՐՔԻՍ/ԻՆ,
ԹՎԻՆ՝ ՌՃԺ. (1661)²⁴:

Տապանագիրն աչքի է ընկնում տեղական բարբառով պայմանավորված բառաձևերով, ուղղագրական շեղումներով: Այստեղ ևս հայտնի է քարը կանգնեցնողի՝ Մելիքի որդի Աղայի անունը, որն այն տեղադրել է իր եղբայր Սարգսի գերեզմանին:

11. ՏԱՊԱՆԱՔԱՐ. խոյածև, Սիսիանի գյուղերից, ԺԷ դար (1,30x0,78 մ): Եռատող արձանագրությունը գետեղված է խոյի մեջքին և, թերևս, միակն է, որն ամբողջովին վերծանել չհաջողվեց, քանի որ կիսատեղծ է.



ԵՄ՝ ՆԵԼԻՔ, ԿԱՐԳԱՆԻ ԷՄ՝
ՇԱՏՆԱՇ... Ա...
ՏԱՊԱՆՍ ՈՐԴԻՍ ՇԱՏ:


Տապանաքարի գույգ լայն նիստերը հարդարված են բարձրարվեստ պատկերաքանդակներով, մի կողմում՝ ցլամարտի, մյուսում խրախճանքի տեսարաններ են (նկ. 2 ա, բ):

2. Կենցաղային սպասքի և կղմինդրի մակագրություններ

Թանգարանի հավաքածուն ունի նաև արձանագիր ցուցանմուշներ, որոնք հիմնականում պղնձյա առարկաներ ու մի քանի կղմինդրի բեկորներ են: Հարկ ենք համարում դրանք ևս ներկայացնել՝ նկատի առնելով նաև այն, որ գրություններից շատերը չէին հրապարակվել:

12. ՊՂՆՁՅԱ ԹԱՍ. Սիսիանի պատմության թանգարան (ՄՊԹ), Մայր մատյան (ՄՄ)–1356 (տրամ.՝ 13,3 սմ, հատակ՝ 6 սմ, բարձր.՝ 4 սմ): Ունի հարթ հատակ, որի կենտրոնում՝ փոքր անցք, արտաքուստ հարդարված է ակոսագծերով, զիգագաձև զարդերիզով, իրանին պատկերված է թռչուն: Նույն իրանի մակերեսին արտաքուստ մակագրված է միայն թվականը (փորագիր), նաև՝ արևելյան արաբական թվերով.


²⁴ Նույն տեղում, արձ. բ:



1876, 1293


Արաբական թվերով հաշվում ենք հիջրի, այսինքն՝ մահմեդական թվականը: Տվյալ դեպքում վկայված է հիջրի 1293 թ., որը համապատասխանում է փրկչական 1876/7 թվականին:

13. ՊՂՆՁՅԱ ԿՈՎԿԻԹ. ՍՊԹ, ՄՄ-168 (տրամ.՝ 20 սմ, հատակ՝ 18 սմ, բարձր.՝ 32 սմ): Ունի ոչ բարձր օղակաձև նստուկ, զույգ բռնակներ, արտաքուստ հարդարված է ակոսագծերով, իսկ վերնամասում՝ բուսական և երկրաչափական զարդատարրերով: Կենտրոնում միայն թվականն է.




1881

14. ՊՂՆՁՅԱ ԹԱՍ. ՍՊԹ, ՄՄ-1412 (տրամ.՝ 18,5 սմ, հատակ՝ 14 սմ, բարձր.՝ 4,5 սմ): Հարթ հատակով և դուրս ձկված շրթով. շրթին և իրանին արտաքուստ ունի ակոսագծեր: Գիրը գետեղված է իրանին, արտաքուստ՝ փորագիր, 1 տող.



ՄԻՐԶԱՅ ԳԱՐԵԳԻՆ, 1896 +

15. ՊՂՆՁՅԱ ՓԻԱԼԱ. ՍՊԹ, ՄՄ-1343 (տրամ.՝ 15 սմ, նստուկ՝ 7,5 սմ, բարձր.՝ 9 սմ): Օղակաձև նստուկով և թույլ շեշտված շրթով, արտաքուստ հարդարված ակոսագծերով և ալիքաձև նախշերով, որի միջնամասում արաբերեն գրություն կա, իսկ ակոսագծերի տակ միայն հիջրի թվականն է.



اسکر صاحبه (տէրը՝ Ասքար)
۱۳۳۲ (1332=1914/5)²⁵

16. ՊՂՆՁՅԱ ԹԱՍ. ՍՊԹ, ՄՄ-1337: Հարթ հատակով և դուրս ձկված շրթով թաս է, շրթի վրա ունի միատող ելնդատառ արձանագրություն, որից հետո՝ խաչապատկեր.




ՏՐ ՄԿՐՏԻՉ +

25 Վերծանությունը՝ արաբագետ Միհրան Մինայանի:

Ժամանակագրորեն բնորոշ է նախորդներին՝ 19-րդ դարավերջ:

17. ՊՂՆՁՅԱ ԹԱՍ. ՍՊԹ, Ազգագրություն (ԱՆ)-307, ՄՄ-1338 (տրամ.՝ 19 սմ, հատակ՝ 15 սմ, բարձր.՝ 4 սմ): Ձևով նման է նախորդին, գործածությունից ձևափոխված, արտաքուստ հարդարված է ակոսագծերով, իրանին ունի միատող փորագիր արձանագրություն.



ԱՆՈՒՇ ՄԻԿՐՏԼՈՒՄՕՎ

Ժամանակամերձ է նախորդներին՝ 19-րդ դարավերջ: Այս և նախորդ առարկաների մակագրություններում հիշատակված անձինք հավանաբար պատվիրատու-նվիրատուներն են:

18. ՊՂՆՁՅԱ ՍԿՈՒՏԵՂ-ՄԱՏՈՒՑԱՐԱՆ. ՍՊԹ, ՄՄ-1 (տրամ.՝ 57 սմ), Շաքի գյուղից: Եզրերը ալիքաձև են, հարդարված փորագիր բուսական և երկրաչափական զարդատարրերով: Կենտրոնում ընթռնելի է հետևյալը.



ԱՄՈՅՓԱ

Դժվարանում ենք մեկնաբանել բառիմաստը, միգուցե՝ անձնանուն է:

19. ԿՂՄԻՆԴԻԻ ԲԵԿՈՐ. ՍՊԹ, ՄՄ-673 (14x12,5 սմ), Աղիտուից, արձանագիր, 3 տող.



...Ս ՅԱԶԱ/ԻԹՂ
ՅԻՇԵՑ/ԷԲ²⁶:

Այս և ստորև ներկայացվող արձանագիր կղմինդրների բեկորները հայտնաբերվել են Աղիտուի հուշակոթողին կից եկեղեցու 1991 թ. հնագիտական պեղումների ընթացքում²⁷: Ինչպես նշում է պեղումների ղեկավար, հնագետ Համլետ Պետրոսյանը, կղմինդրները բնորոշ են 11-12-րդ դարերին, իսկ արձանագրությունները հիշատակային բնույթ ունեն²⁸: Արձանագրակիր


26 Տե՛ս Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., Հանդաբերդի վանքը և նրա պեղումները, Եր., 2009, էջ 82, ծնթ. 157:

27 Պեղումների արդյունքների մասին տե՛ս Պետրոսյան Հ., Աղիտուի 1991 թ. պեղումների հիմնական արդյունքները, Հանրապետական հնագիտական նստաշրջան. զեկուցումների հիմնադրույթներ, Եր., 1994, էջ 51-53:

28 Տե՛ս Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 82:

կղմինդրներ հայտնի են նաև Դվինից²⁹, Աքորիից³⁰, Հանդաբերդի վանքից³¹ և այլ հնավայրերից³²:

20. ԿՂՄԻՆԴՐԻ ԲԵԿՈՐ. ՍՊԹ, ՄՄ-1313 (14x10,5 սմ), Աղիտուից, 5 տող.



...ՋԱՅՍ ԵՎԱ...
...Ս ԵՒ ՄՆՊԱՄՏ՝...
...ԱՐՔԱ...
...ԻՍՍ...
...ԷԻ...³³

21. ԿՂՄԻՆԴՐԻ ԲԵԿՈՐ. ՍՊԹ, ՄՄ-671 (29x17 սմ), Աղիտուից՝ 2 տող.



ՈՒՔՍՈՍ
ԵՄ ԽՈՍՐՈՎԻՅԴ՝ՈՒԽՏ՝...³⁴

Առաջին տողում ընթերցվող Ուքսոմ–ը, կարծում ենք, անձնանուն է: Միջ–նադարյան սկզբնաղբյուրներում հանդիպում են Ուքան, սակավ՝ Ուքոս³⁵ անվանաձևերը:

Կղմինդրների արձանագրությունների ուսումնասիրությունը կարևոր–

29 Դվինի 1937–1938 թթ. հնագիտական պեղումների արդյունքում փաստագրվել են նաև արձանագրված կղմինդրի գտածոներ, որոնք հնագետ Կ. Ղաֆադարյանը վերագրում է կաթողիկե Ս. Գրիգոր եկեղեցու նորոգման ժամանակաշրջանին, այն է՝ մարգպան Սմբատ Բագրատունու 607–617 թթ. նորոգումներին: Կղմինդրներից մեկին հիշատակված է նաև եկեղեցու՝ Սուրբ Գրիգոր անունը: Գրերի՝ կղմինդրի վրա թրծվելուց առաջ փորագրված լինելու հանգամանքը Ղաֆադարյանին թույլ է տվել ենթադրել, որ դրանք հատուկ պատվերով են արվել, սակայն, մեծ մասամբ այդ արձանագրությունները մանր հիշատակագրեր ու գրչախաղեր են՝ գրված անհայտ միաբանների անունից (տե՛ս **Ղաֆադարյան Կ.**, Դվին քաղաքը և նրա պեղումները. հատ. I, Եր., 1952, էջ 246, նկ. 230, 231): Դվինի արձանագիր կղմինդրի մասին տե՛ս նաև **Тер-Аветисян С.**, Древнеармянские надписи, найденные во время раскопок Двина 1937–1938 гг., «Հայագիտական հետազոտություններ», Եր., 2010, էջ 278–282, **Քոչարյան Գ.**, Դվինի վաղմիջնադարյան կղմինդրը որպես թվագրման գործոն, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2016, N 2 (20), էջ 34:

30 Տե՛ս **Պետրոսյան Հ., Հոբոսյան Ս.**, Աքորու վաղմիջնադարյան տաճարի պեղումները, «Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում (1986–1987 թթ. պեղումների արդյունքները)», Եր., 1993, էջ 132, աղ. CLIX. 4:

31 Տե՛ս **Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ.**, Հանդաբերդի վանքը և նրա պեղումները, էջ 81–82, նկ. 94, 95:

32 Դեռևս անտիկ ժամանակաշրջանից հայտնի կղմինդրի գործածությանն ու տիպաբանությանը անդրադարձել է հնագետ Դիաննա Միրիջանյանը, տե՛ս **Միրիջանյան Դ.**, Վաղմիջնադարյան շինարարական խեղեցնի մի տեսակի մասին, «Էջմիածին», 2010, ԺԱ, էջ 74–78 + 8 էջ ներդիր:

33 **Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ.**, Հանդաբերդի վանքը և նրա պեղումները, էջ 82, ծնթ. 157:

34 Նույն տեղում, ծնթ. 157:

35 Այս անունը վկայված է Գլաձորում գրված 1304 թվակիր (սխալմամբ 1334 է գրվել) մի Ավետարանի հիշատակարանում (տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԴ. դար, մասն Ա. (1301–1325 թթ.), կազմողներ՝ **Խաչիկյան Լ., Մաթևոսյան Ա., Ղազարոսյան Ա.**, Եր., 2018, էջ 72, N 63):

վում է նաև հայ հնագրության զարգացման տեսանկյունից, քանի որ դեռևս վաղ միջնադարով թվագրվող Դվինից հայտնի կղմինդրների գրերն ուղղագիծ երկաթագրի ու շղագրի նման են: Այս հարցին հանգամանորեն անդրադարձել է Կ. Ղաֆադարյանը, որը Դվինից հայտնաբերած արձանագիր կղմինդրները հիմք ընդունելով պնդում է, որ դեռևս վաղ միջնադարից հայերն ունեցել են գրչության երեք հիմնական ձևեր՝ բոլորածն երկաթագիր, ուղղագիծ երկաթագիր և նոտրգիր (շղագրանման): Եթե առաջինն առավելապես բնորոշ է վիմագրերին, իսկ երկրորդը՝ ձեռագիր մատյաններին (վաղ ձեռագրերին հատուկ է նաև բոլորածն երկաթագիրը), ապա շղագրանման նոտրգրով հանդես են գալիս հենց կղմինդրների և զանազան խեցանոթների արձանագրությունները³⁶: Նույնը նաև ներկայումս Սիսիանի պատմության թանգարանում գտնվող Աղիտուի, ինչպես նաև Հանդաբերդի վանքի արձանագիր կղմինդրների դեպքում է, երբ շղագրանման գրատեսակն իր գոյությունը պահպանում է նաև զարգացած միջնադարում:

22. ԿԱՐԱՍ. ՍՊԹ, ՄՄ-1769, (բարձ. 1,50 մ, շուրթի տրամ. 0,28 մ): Անգեղակոթից հայտնաբերվել է 1980-ականներին, հողային աշխատանքների ընթացքում, գնվել է 2012 թ. դեկտեմբերին, Հակոբ Հակոբյանից (նկ. 3): Կարասի իրանի վերին նեղացող հատվածում՝ իրար տակ, առկա են երկու արձանագիր կնիքներ՝ շրջանաձև և քառանկյուն՝ 3 սմ տրամաչափով.

ա. Շրջանաձև կնիքի կենտրոնում թվականն է, իսկ շրջագծին, թերևս, վարպետի անունը.



ՔՐԻՍՏՈՍԻ ՇԼԱՌԱՅ՝ ԳՐԻԳՈՐ ՌՈՒՇԱՆԵԼԱՅՆ, 1854:

բ. Քառանկյուն կնիքին, 3 տող.



ՔՐԻՍՏՈՍԻ ՇԼԱՌԱՅ՝ / ՀԱՅՐԱ/ԲԵՏ +:

Կարասների վրա դեռևս ուրարտական ժամանակաշրջանից հայտնի են նրանց տարողությանը վերաբերող սեպագրեր և զանազան հիերոգլիֆներ³⁷:

36 Տե՛ս Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հատ. I, էջ 246-247:

37 Տե՛ս Հարությունյան Ս., Քալանթարյան Ա., Պետրոսյան Հ., Հորոսյան Ս., Մարգարյան Գ., Մելքոնյան Հ., Ավետիսյան Պ., Գինին հայոց ավանդական մշակույթում, Եր., 2005, էջ 47-48, աղ. 18-19: Ուրարտական կարասների և նրանց չափման միավորներ-կնիքների մասին տե՛ս նաև Ղասարյան Զ., Թեյշեբախիի (Կարմիր բլուրի) գինու կարասները, ՊԲՀ, 1959, N 4, էջ 215, Ի. Բ. Брашинский, Урартские карасы. проблемы метрологии и стандартов, ИФЖ, 1978, N 1, с. 141-154, Варданян Р., Асатрян Д., Некоторые замечания по метрологии Урарту, ИФЖ, 1980, N 2, с. 171, рис. 2, Փիլիպոսյան Ա., Մկրտչյան Բ., Գեղիովի վանտոսպան

Տրամաբանական է, որ խեցեգործական մշակույթն ավանդաբար պետք է շարունակվեր նաև անտիկ ժամանակաշրջանում և միջնադարում: Դվինից, Անիից, Գառնիից, Ամբերդից, Զվարթնոցից և այլ հնավայրերից հայտնաբերվել են մեծաթիվ դրոշմազարդ կարասներ, խուփեր ու դրանց բեկորներ: Խոսելով Դվինի դրոշմազարդ կարասների մասին՝ Կ. Ղաֆադարյանը դրանք թվագրում է 9–12-րդ դարերով և նշում, որ կարասների վրա հիմնականում պատկերվել են միջնադարում այնքան սիրելի որսի ու խրախճանքի տեսարանները³⁸: Ինչ վերաբերում է կարասների՝ արձանագիր կնքադրոշմներ ունենալու խնդրին, ապա այդօրինակ խեցանոթներ մեզ հայտնի չեն, փոխարենը վավերացվել են բուսաերկրաչափական պատկերների տեսքով վարպետանշաններ, իսկ խուփերի նմանօրինակ զարդատարրերի կողքին երբեմն պատահում են նաև հայերեն գրերի «իմիտացիայի» ձևով արտահայտված դրոշմազարդեր³⁹: Ստացվում է, որ ծագումով Անգեղակոթից խնդրո առարկա կարասի արձանագիր զույգ կնքադրոշմներն ուշագրավ են ոչ միայն Սիսիանի տարածաշրջանում 19-րդ դարում գոյություն ունեցած զարգացած խեցեգործության մասին վկայելու, այլև վարպետների անուններն ամբողջությամբ վավերացնելու առումով: Ըստ ամենայնի, վարպետներ Հայրապետն ու Գրիգոր Ռուշանյանը հմուտ խեցեգործներ լինելով՝ ունեցել են իրենց անձնական կնիքը: Ենթադրելի է, որ նրանք գործել են վանքապատկան արհեստանոցում, ինչի մասին է վկայում նրանց կնիքների պարտադիր բաղադրիչ «Քրիստոսի ծառայ» արտահայտությունը:

Վարպետների կնքադրոշմներ հանդիպում են նաև գեղարվեստական մետաղի, փայտարվեստի նմուշների, ձեռագիր մատյանների, քարեղեն հուշակոթողների, մասնավորապես՝ խաչքարերի վրա: Վերջիններիս դեպքում դրանք վարպետի ամբողջ կամ սղված ստորագրության տեսքով են՝ ՔԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ, ԱԿՈՐ ՆԿԱՐՈՂ և այլ ձևակերպումներով, իսկ, օրինակ, Սարդարապատի հայոց ազգագրության թանգարանից հայտնի 18-րդ դարով թվագրվող պղնձյա ափսեի պսակի հակառակ կողմում պահպանվել է վարպետ Կարապետի անվանակիր կնքադրոշմը՝ ԿԱՐԱՊԵՏ վերտառությամբ⁴⁰: Ամենից բնորոշը, սակայն, 17–19-րդ դդ. ձեռագրերում հաճախ հանդիպող կնքադրոշմներն են, որոնց վրա հիմնականում փորագրված են նշանավոր հոգևորականների, գրիչների, ծաղկողների կամ ձեռագրի պահպանության պատասխանատու-ավանդապահի անունները: Օրինակ, 18-րդ դ. բազմաշխատ գրիչներից է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոտար, գրագիր, ծագումով աշտարակեցի Ղունկիանոսը, որի անվանակիր շրջանաձև և ութանկյուն կնքադրոշմներին հիմնականում կարդում ենք «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԴՈՒՆԿԻԱՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ»։ Նշվում է նաև թվականը⁴¹:

(ուրարտական) քարայր-դամբարանը, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», հատ. 18, եր., 2001, էջ 153, աղ. 30, **Franco Miletto** (with an appendix by **Mirjo Salvini**), On the Estimation of the Volumes of some Urartian Pithoi, AWE 9, 2010, p. 40, fig. 9, p. 41, fig. 10.

38 Տե՛ս **Ղաֆադարյան Կ.**, Դվին քաղաքը և նրա պեղումները, հատ. I, էջ 188, 197, նկ. 170–171:

39 Տե՛ս նույն տեղում, էջ 198, նկ. 178:

40 Տե՛ս **Հարությունյան Ա., Բաբաջանյան Ա.**, Պղնձե արձանագիր առարկաներ Սարդարապատի հայոց ազգագրության թանգարանից, «Սեդրակ Բարխուդարյան – 120» գիտական հոդվածների ժողովածու (լսմբ. Գ. Սարգսյան, Ա. Հարությունյան), եր., 2019, էջ 145, արձ. 10:

41 Տե՛ս **Ա. Հարությունյան**, Գրիչ Ղունկիանոս Աշտարակեցու տապանագիրը և մատենագրական վաստակը, «ՎԷՎ», 2016, N 2 (54), էջ 113, 119, նկ. 3–9:

Ամփոփելով Միսիանի Ն. Ադոնցի անվան պատմության թանգարանի արձանագիր առարկաներին նվիրված մեր ուսումնասիրությունը՝ կարելի է փաստագրել հետևյալը.

Քննության ենթակա 22 արձանագրություններից (11 վիմագիր և նույն-քան թանգարանային առարկաների մակագրությամբ) նախկինում հրատարակվել են 8-ը: Արձանագրությունների ուսումնասիրությամբ պարզվեցին խաչքարերի տեղագրական-ծագումնաբանական հարցերը, վավերացվեցին քարգործ վարպետների անունները և այլն: Ակնհայտ է, որ կոթողները հիմնականում Միսիանի մերձակա գյուղերից են՝ Անգեղակոթից, Որոտանից, Շաքիից, Շաղատից և այլն, իսկ քանդակային բազում ընդհանրությունները վկայում են, որ դրանց մի մասը միևնույն վարպետների ձեռքով են կերտվել:

Արձանագրությունների քննությամբ գիտական շրջանառության մեջ են դրվում նաև մի շարք նոր կամ սակավ հանդիպող անձնանուններ, ինչպես օրինակ՝ Նուրփաշ, Ադալմուլք, Նելիձ, Դոնդիշ, Էզդանբաշխ և այլն: Թանգարանի հարուստ հավաքածուի ինքնատիպ նմուշներ են նաև ծագումով Ադիտուից, 11-12-րդ դդ. թվագրվող արձանագիր կոմիտքի բեկորներն ու Անգեղակոթից բերված 1854 թվակիր կարասը, որի իրանի վերին մասում պահպանվել են խեցեգործ վարպետների անվանակիր զույգ կնքադրոշմները:

Արսեն Է. Հարությունյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայ վիմագրությունն ու ձեռագրագիտությունը: Ուսումնասիրում է հատկապես Արմավիրի մարզի, ինչպես նաև Տաթևի վանքի վիմագրական ժառանգությունը: Մի քանի մեմագրությունների և շուրջ վեց տասնյակ գիտական հոդվածների հեղինակ է, որոնց մեծ մասը նվիրված է հայոց հոգևոր կենտրոն Վաղարշապատի վանքերի նորահայտ արձանագրություններին:

Summary

THE INSCRIBED OBJECTS OF HISTORY MUSEUM AFTER N. ADONTZ IN SISIAN

Arsen E. Harutyunyan

Key words – Sisian, museum, cross-stone (khachkar), inscription, gravestone, exhibit, copper utensils, tile, cask (karas).

The History Museum in Sisian of the RA Syunik Province, founded in 1989, has a rich collection presenting the cultural heritage of the region that includes the working tools of the primitive men and the 19th-century samples of applied art. The yard in the front side of the museum decorated with stone obelisks is called Stone Museum (Karadaran). Here petroglyphs, architectural details of the buildings, cross-stones (khachkars), gravestones (mainly ram-shaped) and other objects brought from surrounding villages and archaeological excavations over the years are exhibited. Many of the exhibits of the Museum as well as the

REFERENCES

1. **Ac'aryan H.**, Hayoc andz'nanunneri bar'aran, h. B, D, Ye'r., 1944, 1948 (**in Armenian**).
2. **Barxudaryan S.**, Mijnadaryan hay c'artarapetner yev' qargorc' varpetner, Ye'r., 1963 (**in Armenian**).
3. **Brashinskij I. B.**, Urartskie karasy. problemy metrologii i standartov, "Istoriko-filologicheskij zhurnal", 1978, N 1, s. 141-154 (**in Russian**).
4. **Gh'afadaryan K.**, Dvin qagh'aqə yev' nra pəgh'umnerə, h. I, Ye'r., 1952 (**in Armenian**).
5. **Gh'asabyan Z.**, T'eysh'ebainii (Karmir bluri) ginu karasnerə, "Patmabanasirakan handes", 1959, t'iv 4, ej 211-220 (**in Armenian**).
6. **Grigoryan G.**, Vahanavanq. patmahnagitakan usumnasirut'yun, Ye'r., 2007 (**in Armenian**).
7. Divan hay vimagrut'yan, prak II, Gorisi, Sisiani yev' Gh'ap'ani sh'rjanner, kazmec Barxudaryan S. G., Ye'r., 1960 (**in Armenian**).
8. Divan hay vimagrut'yan, prak III, Vayoc dz'or. Ye'gh'egnadz'ori yev' Azizbekovi sh'rjanner, kazmec Barxudaryan S. G., Ye'r., 1967 (**in Armenian**).
9. **Kramarovskij M. G.**, Chelovek srednevekovoj ulicy: Zolotaja Orda. Vizantiya. Italiya. SPb, 2012 (**in Russian**).
10. Hayeren dz'er'ageri hish'atakaranner. XIV dar, masn A (1301-1325 tt'), kazmoghner **Xach'ikyan L., Mat'evosyan A., Gh'azarosyan A.**, Ye'r., 2018 (**in Armenian**).
11. Hayeren dz'er'ageri XV dari hish'atakaranner, h. B, G, kazmec **Xach'ikyan L.**, Ye'r., 1958, 1967 (**in Armenian**).
12. **Hasrat'yan M. S.**, Syuniqi bnakavayreri patmut'yunic, "Patma-hnagitakan usumnasirut'yunner", Ye'r., 1985, ej 117-165 (**in Armenian**).
13. **Hasrat'yan M. S.**, Tegh' gyugh'i mijnadaryan hush'ardz'annerə, "Patma-hnagitakan usumnasirut'yunner", Ye'r., 1985, ej 241-246 (**in Armenian**).
14. **Harut'yunyan A.**, Grich' Gh'unkianos Ash'tarakecu tapanagirə yev' matenagrakan vastakə, "Vem" hamahaykakan handes, 2016, tiv' 2 (54), ej 105-119 (**in Armenian**).
15. **Harut'yunyan A.**, Syunyac Grigor B arqayi anvanakir sarkofagə, "Banber hayagitut'yan", 2018, t'iv 1 (16), ej 137-149 (**in Armenian**).
16. **Harut'yunyan S., Qalant'aryan A., Petrosyan H., Hobosyan S., Sargsyan G., Melqonyan H., Avetisyan P.**, Ginin hayoc avandakan msh'akuyt'um, Ye'r., 2005 (**in Armenian**).
17. **Mirijanyan D.**, Vagh'mijnadaryan sh'inarakan xecegh'eni mi tesaki masin, "Ejmiac'in", 2010, h. XI, ej 74-78+ 8 ej nerdir, (**in Armenian**).
18. **Miqayelyan T.**, Xoyakerp tapanaqarer Sisianic, "Merdzavor yev' Mijin Arevelqi ye'rkner yev' zh'ogh'ovurdner" XXIII, Ye'r., 2004, ej 534-540, (**in Armenian**).
19. **Miqayelyan T.**, Memorial hush'ardz'anner Syuniquc, "Gitut'yun yev' texnika", 2004, tiv 8, ej 12-17, (**in Armenian**).
20. **Petrosyan H.**, Agh'itui 1991 t'. pəgh'umneri ardyunqnerə, "Hanrapetakan hnagitakan nstash'rjan. zekucumneri himnadruyt'ner", Ye'r., 1994, ej 51-53, (**in Armenian**).
21. **Petrosyan H.**, Xach'qar. c'agumə, gorc'aruyt'ə, patkeragrut'yunə, imastabanut'yunə, Ye'r., 2008, (**in Armenian**).
22. **Petrosyan H., Kirakosyan L., Safaryan V.**, Handaberdi vanqə yev' nra pəgh'umnerə, Ye'r., 2009, (**in Armenian**).
23. **Petrosyan H., Hobosyan S.**, Aqoru vagh'mijnadaryan tac'ari pəgh'umnerə, "Hnagitakan ash'xatanqnerə Hayastani norakaruycnerum (1986-1987 tt'. pəgh'umneri

- ardyunqnerə””, Ye’r., 1993, ej 131-137, **(in Armenian)**.
24. **Sagh’umyan S.**, Norahayt vimagr, “Lraber hasarakakan gitut’yunneri”, 2001, t’iv 1, ej 93-103, **(in Armenian)**.
 25. **Step’anos Orbelean**, Patmut’yun nahangin Sisakan, T’iflis, 1910, ej 317-321, **(in Armenian)**.
 26. **P’iliposyan A., Mkrtch’yan R’.**, Gegh’hovti vantospyan (urartakan) qarayr-dambaranə, “Hayastani hnagitakan hushardz’annerə”, h. XVIII, Ye’r., 2001, **(in Armenian)**.
 27. **Qaradaran**, teqsterə` **Petrosyan C’.**, lusankarnerə yev’ dz’evavorumə` **Hakobyan V.**, Sisian, 2010, **(in Armenian)**.
 28. **Qoch’aryan G.**, Dvini vagh’mijnadaryan kgh’mindrə vorpes t’vagrman gorc’on, “Banber Ye’rev’ani hamalsarani. hayagitut’yun”, 2016, t’iv 2 (20), ej 28-36 **(in Armenian)**.
 29. **Vardanján R., Asatryan D.**, Nekotorye zamechaniya po metrologii Urartu, “Istoriko-filologicheskij zhurnal”, 1980, N 2, s. 166-178 **(in Russian)**.
 30. **Ter-Avetisjan S.**, Drevnearmjanskíe nadpisi, najdennye vo vremja raskopok Dvina 1937-1938 gg., “Hajagitakan hetazotut’junner”, Ye’r., 2010 **(in Russian)**.
 31. **Tokarskij N. M.**, Dzhhrvezh II, Voxdzhaber. Rezultaty rabot Dzhhrvezhskoj arxeologicheskoy ekspedicii 1958-1962 gg., Jerevan, 1964 **(in Russian)**.

ՀԱՅԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԺԱՆ (ԺԷ) ԳՐԱԲԻ, ԹԻՒԼ 2 (66), ԿԱՐԻԼ-ԽՈՒՆԻՍ, 2019

ՎԷՎ ԽԱՄԱԽԱՅԻԿԱԿԱՆ ԽԱՆՈՒԼԵԱ



Նկ. 1 Քարադարանի մուտքը



Արձ. 1



Արձ. 2



Արձ. 3



Արձ. 4



Արձ. 7



Արձ. 8



Արձ. 5



Արձ. 6



Արձ. 9



Արձ. 10



Արձ. 11



Նկ. 2 ա, բ



Արձ. 12ա, բ



Արձ. 13



Արձ. 14



Արձ. 17



Արձ. 15



Արձ. 16



Արձ. 18



Արձ. 19



Արձ. 20



Արձ. 21



Նկ. 3



Արձ. 22ա, բ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԺԱ (ԺԷ) ԳԱՐԻ, ԹԻՎ 2 (66), ապրիլ-հունիս, 2019

ՎԷՎ համահայկական հանդես